— Զարմանալի՛ է այդ բախտ ասած բանը, ասում են, նա մի հրէշաւոր կնիկ է, երկու երես ունի, մինը առջեւից, միւսը ետեւից: Առջեւի երեսը թարմ եւ գեղեցիկ է՝ միշտ ժպտող աչքերով, նրանցով նայում է իր սիրելիներին միայն: Ետեւի երեսը հնացած է, լի խորշոմներով, որպէս մի զզուելի պառաւի դէմք. մի հատիկ աչք միայն ունի մռայլոտ ճակատի վրայ, այն եւս կոյր...: Նա մի՛շտ դարձնում է դէպի ինձ այդ չարանենգ դէմքը իր սարսափելի խորշոմներով, եւ ես միշտ լսում եմ նրա ցամաք եւ գունաթափ շրթունքների միջից այդ խօսքերը՝ «դու ինձանից ոչ մի բարիք մի՛ սպասիր»...

Նա բոպէական լռութիւնից յետոյ շարունակեց, իսկ այժմ աւելի խռովեալ ձայնով.

— Ասում են՝ մեր ժամանակներում հրաշքներ չեն լինում, հրաշք չէ՛, բա ի՞նչ զահրումար է, միանգամից — երկու որս...

Այժմ հասկացայ, որ կիսախելագար Սագօյի խօսքերը կծու ակնարկութիւններ էին դէպի ինձ եւ դէպի Մարօն:

— Ի՞նչ ես ուզում ասել, — հարցրի ես:

Նա պատասխանեց աւելի վրդովուած կերպով.

— Հա՛, երկու որս, մինը ղաբանը, միւսը՝ Մարօի սիրտը...

Նա արտասանեց այս խօսքերը այնպիսի մի յանգով, որ իսկոյն գրգռեց իմ բարկութիւնը: Նա առանց ուշադրութիւն դարձնելու, շարունակեց.

— Ախար Մարօն էլ փոքր ղաբան չէ... նրան որսալը՝ ահա այդ է քաջութիւնը:

— Եթէ դու կը շարունակես այսպիսի յիմարութիւններ դուրս տալ, դու կը դառնաս երրորդ որսը... — ասեցի ես եւ արդէն մերկացուցած խենջարը իմ ձեռքումն էր:

— Միթէ՞ արժէ կռուել այն վայրենի կատոի համար, — մէջ մտաւ Ասլանը, որ նոյն բոպէին մօտեցաւ մեզ:

— Աա՛յ, երեւի քե՞զ էլ է ճանկռոտել... — դարձայ ես դէպի Ասլանը աւելի բարկութեամբ:

Նա ոչինչ չպատասխանեց:

— Պէտքէ կատոի հետ կատու լինել եւ նրա ճանկերից ազատ մնալ... — պատասխանեց Սագօն բոլորովին վրդովուած կերպով:

— Եթէ ոչ, շան հետ մնում է նա միշտ անհաշտ...:

— Ամօ՛թ է, տղերք, — ձայն տուեց Կարօն եւ կայծակի արագութեամբ խլեց իմ ձեռքից խենջարը: